

Կ Ա Ր Ծ Ի Ք

պաշտոնական ընդդիմախոսի

Անուշ Սամվելի Առաքելյանի «Հայաստանի Հանրապետության Լոռու և Տավուշի մարզերի ջրային էկոհամակարգերի ձկնաշխարհը» թեմայով Գ. 00. 08 – «Կենդանաբանություն. Մակաբուծաբանություն. Էկոլոգիա» մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների գիտական աստիճանի հայցվող ատենախոսության վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության Լոռու և Տավուշի մարզերի գետերն ու ջրակալները պատկանում են Կուր գետի ավազանին: Համեմատաբար խոշոր գետեր են հանդիսանում Դեբեդն իր Ձորագետ և Փամբակ վտակներով, Աղստևն իր Գետիկ վտակով: Դեբեդը Հայաստանի տարածքի ամենաջրառատ լեռնային գետն է: Դեբեդը Կուրի ավազանի ամենախոշոր գետն է: Աղստևը Հայաստանի խոշորագույն գետերից է եւ համարվում է Տավուշի մարզի ջրային զարկերակը: Այս գետերը մեծ նշանակություն ունեն Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման համար, ուստի գետերի և նրա վտակների ձկնաբանական հետազոտությունները գիտական և գործնական մեծ հետաքրքրություն են ներկայացնում:

Դեբեդ գետը ՀՀ համար կենսական նշանակություն ունի: Գաղտնիք չէ, որ Դեբեդ սնում է Լոռու եվ Տավուշի մարզեր գյուղատնտեսական նշանակություն ունեցող հողերի հսկայական մասը եւ ոչ միայն: Դեբեդի եւ Դեբեդը սնող վտակների վրա տեղակայված են մի շարք ՀԷԿ-եր, որոնք, մեծ վնաս են հասցնում շրջակա միջավայրին, նախ ջրազրկում են տարածքը, նվազեցնում են ձկնապաշարը եւ ի վերջո հարված են հասցնում գյուղատնտեսությանը:

Ժամանակակից էկոլոգիայի կարևոր խնդիրներից է հանդիսանում կենսաբազմազանության ուսումնասիրությունը:

Անուշ Առաքելյանի թեկնածուական ատենախոսությունը նվիրված է Հայաստանի Հանրապետության Լոռու և Տավուշի մարզերի ջրային էկոհամակարգերի ձկնաշխարհի ուսումնասիրմանը, ինչպես նաև այդ մարզերի գետերի ձկների տեսակային բազմազանության վրա փոքր ՀԷԿ-երի ազդեցության նկարագրմանը: Վերոհիշյալ նպատակի իրականացման համար ատենախոսն նկարագրել է Լոռու և Տավուշի

մարզերի ջրային էկոհամակարգերի՝ գետերի, դրանք սնուցեղ վտակների և ջրամբարների ձկների տեսակային կազմը, ձկնատեսակների ձևաբանական առանձնահատկությունները և վերլուծել դրանց միջպոպուլյացիոն տարբերությունները: Հեղինակի կողմից նկարագրվել է փոքր ՀԷԿ-երի հնարավոր ազդեցությունը ձկնաշխարհի կենսաբազմազանության վրա:

Հեղինակի կողմից ուսումնասիրել Լոռու և Տավուշի մարզերի գետերի ու ջրամբարների որոշ ձկնատեսակների բազմացման ժամանակահատվածները, բեղունությունը, գծային և քաշային աճը, վտառների տարիքային և սեռային կազմը, ձևաբանական հատկանիշների սեռական երկձևությունը:

Հեղինակի կողմից առաջին անգամ ուսումնասիրվել է Լոռու և Տավուշի մարզերի գետերում ու ջրամբարներում բնակվող ձկնատեսակների ներկայիս կազմն ըստ առանձին գետերի և ջրակալների: Առաջին անգամ ուսումնասիրվել է Լոռու և Տավուշի մարզերի ջրային էկոհամակարգերի արծաթափայլ կարասի, արևելյան տառեխիկի, անդրկովկասյան սպիտակաձկան, քառթակի, արևելյան թեփուղի կենսաբանական առանձնահատկությունները: Աղստև գետում առաջին անգամ արձանագրվել է Հայաստանի Հանրապետության կենդանիների Կարմիր գրքում գրանցված ոսկեգույն ծականի, ինչպես նաև Հայաստանի ձկնաշխարհի համար նոր ձկնատեսակ համարվող ծականի *Cobitis sp.* առկայությունը և նկարագրվել է նրանց ձևաբանական հատկանիշները: Ատենախոսի կողմից առաջին անգամ նկարագրվել է Լոռու և Տավուշի մարզերի գետերի վրա շահագործվող փոքր ՀԷԿ-երի ձկնապաշտպան կառուցվածքները և գնահատվել է փոքր ՀԷԿ-երի ազդեցությունն ուսումնասիրված գետերի ձկնաշխարհի տեսակային կազմի վրա:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, 4 գլուխներից, եզրակացություններից, առաջարկություններից, գրականության ցանկից և հավելվածից: Գրականության ցանկն ներառում է 108 անուն հայրենական և արտասահմանյան հրապարակումներ: Աշխատանքը շարադրված է 245 համակարգչային էջի վրա, ընդգրկում է 73 նկար և 60 աղյուսակ:

Ատենախոսության նյութերը հրապարակվել են 11 գիտական աշխատանքներում: Կատարված աշխատանքների արդյունքները ներկայացվել են մի շարք միջազգային գիտաժողովներում, ինչպես նաև քննարկվել են ՀՀ ԳԱԱ Կենդանաբանության և

հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի գիտական խորհուրդների 2015-2019թթ. նիստերում:

Յուրաքանչյուր գլխում ատենախոսը ներկայացնում և վերլուծում է իր առջև դրված նպատակային խնդիրների հետ կապված ստացված տվյալները:

Աշխատանքի ներածության բաժնում հիմնավորված է ատենախոսության արդիականությունը, անհրաժեշտ պահանջներին համապատասխան նշված են աշխատանքի նպատակն ու խնդիրները, պաշտպանության ենթակա հիմնադրույթները, գիտական նորույթն և ստացված արդյունքների գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին գլխում ներկայացված է Հայաստանի Հանրապետության Լոռու և Տավուշի մարզերի ջրային էկոհամակարգերի էկոլոգա-աշխարհագրական բնութագիրը Սևանա լճի ավազանի էկոլոգաաշխարհագրական բնութագիրը: Այս գլխում ներկայացված են նաև Լոռու և Տավուշի մարզերի գետերի էկոլոգիական վիճակը և ջրատեխնիկական կառույցները որպես ձկնաշխարհի բազմազանության վրա ազդող գործոններ:

Երկրորդ գլխում ատենախոսը նկարագրել է հետազոտության օբյեկտը և ուսումնասիրության մեթոդները: Ուսումնասիրությունների մեթոդները համապատասխանում են ընտրված հետազոտությունների բնույթին: Տվյալների վարիացիոն վիճակագրական մշակումը կատարվել է համակարգչային Stat soft statistics 12.5 վերլուծական փաթեթի և MS Excel 2016 համակարգչային ծրագրի միջոցով:

Ատենախոսության երրորդ գլխում ներկայացված է Հայաստանի Հանրապետության Լոռու և Տավուշի մարզերի ջրային էկոհամակարգերի ձկների տեսակային կազմը, տարածվածությունը, որոշ ձկնատեսակների բազմազան ժամանակահատվածները, բեղունությունը, ձկնատեսակների ձևաբանական առանձնահատկությունները և միջպոպուլյացիոն տարբերությունները: Այս գլխում ներկայացված է նաև որոշ ձկնատեսակների գծային և քառային աճը, վտառների տարիքային և սեռային կազմը, ձևաբանական հատկանիշների սեռական երկձևությունը:

Ատենախոսի աշխատանքի չորրորդ գլխում ներկայացված է Լոռու և Տավուշի մարզերի գետերի վրա շահագործվող փոքր ՀԷԿ-երի ձկնապաշտպան կառուցվածքները և փոքր ՀԷԿ-երի ազդեցությունն այդ գետերի ձկնաշխարհի տեսակային կազմի վրա:

Ատենախոսության հիմնական արդյունքներն ամփոփվել են 6 կետից բաղկացած **եզրակացություններում**: Եզրակացությունները տրամաբանորեն բխում են ատենախոսության բովանդակությունից և արտացոլում են ստացված արդյունքները:

Ատենախոսության հիմնադրույթները լիովին արտացոլված են 11 հրապարակումներում:

Սեղմագիրը ամբողջությամբ համապատասխանում է ատենախոսության բովանդակությանն ու կառուցվածքին:

Ընդհանուր առմամբ դրական գնահատելով աշխատանքը ուզում են նշել նաև ատենախոսության մեջ տեղ գտած թերությունները.

Ատենախոսության մեջ (էջ 53) նշված է, որ Լոռու և Տավուշի գետերում ու ջրակալներում տարածված կողակների կարգաբանական դիրքը մինչ այժմ էլ հստակ չէ և կարիք ունի լրացուցիչ ուսումնասիրությունների և սույն աշխատանքում չեք անդրադարձել այդ խնդրին, և ուսումնասիրված կողակների ընտրանքները մինչև նոր ուսումնասիրությունների իրականացումը դասել եք կողակ *Capoeta capoeta* տեսակին՝ առանց ենթատեսակային պատկանելությունը նշելու, սակայն 123, 126, 129 էջերում կողակ տեսակի փոխարեն նշված է Սևանի կողակ:

Ամուրյան նրբաձկան տարածվածության նկարագրման մեջ նշվում է, որ այս ձկնատեսակը Հայաստանի ջրակալներ է ներթափանցել անցած դարի 60-ական թթ.-ին և ներկայում ունի լայն տարածում, ինչպես նաև, որ վերջին տարիներին այս ձկնատեսակը ներթափանցել է նաև Սևանա լճի ավազան, սակայն ատենախոսության մեջ բազմաթիվ տեղերում՝ օրինակ էջ 38, 39, 41 և այլ, նշվում է, որ այս ձկնատեսակը կլիմայավարժեցված է:

Ատենախոսության վերաբերյալ որպես դիտողություններ և առաջարկություն անհրաժեշտ են գտնում նշել հետևյալը.

Հաշվի առնելով, որ ոսկեգույն ծականը ներառված է ՀՀ Կենդանիների կարմիր գրքում (2010) որպես տեսակ, որի կարգավիճակը անորոշ է այդ ձկնատեսակի պոպուլյացիաների վիճակի մասին անբավարար տեղեկությունների պատճառով (DD կատեգորիա), ցանկալի կլիներ նաև, որպեսզի հեղինակի կողմից ներկայացվեր հետազոտված ոսկեգույն ծականի առանձնյակների տարիքը, սեռային կազմը, սեռական արգասիքների հասունացման փուլը, սննդառությունը:

Նշված դիտողությունները սակայն չեն նվազեցնում ատենախոսության գիտական արժեքը: Ասպիրանտի կողմից իրականացված ուսումնասիրությունները կատարվել են գիտական բարձր մակարդակով: Ատենախոսության նյութերը, հիմնական դրույթներն ու ստացված արդյունքները ունեն գիտական և գործնական արժեք, կարող են օգտագործվել բուհական դասախոսություններում, ինչպես նաև հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ոլորտներում աշխատող մասնագետների կողմից:

Աշխատանքը կատարված է մեծաքանակ նյութի հիման վրա: Ստացված արդյունքները ենթարկվել են վիճակագրական վերլուծության: Ատենախոսությունը շարադրված է գրագետ, հետևողական և սահուն անցումներով: Գրական տեղեկությունները օգտագործված են նպատակային, համապատասխան վերլուծություններով, հղումները կատարված են տեղին:

Ըստ բովանդակության, գիտական և գործնական նշանակության ատենախոսությունը համապատասխանում է Գ. 00. 08 – «Կենդանաբանություն. Մակաբուծաբանություն. Էկոլոգիա» մասնագիտությանը:

Այսպիսով, Անուշ Սամվելի Առաքելյանի «Հայաստանի Հանրապետության Լոռու և Տավուշի մարզերի ջրային էկոհամակարգերի ձկնաշխարհը» թեմայով ատենախոսությունն արդիական, ավարտուն գիտական հետազոտություն է, փաստացի նյութի ծավալով, գիտական նորոյթով, տեսական և կիրառական նշանակությամբ համապատասխանում է ՀՀ ԲՈՋ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը՝ Անուշ Սամվելի Առաքելյանը, արժանի է Գ. 00. 08 – «Կենդանաբանություն. Մակաբուծաբանություն. Էկոլոգիա» մասնագիտությամբ կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս կ.գ.թ.

Ն. Է. Բարսեղյան

“Ն. Է. Բարսեղյանի ստորագրությունը հաստատում եմ”



ԿՀԷԳԿ-ի գիտքարտուղար
կ.գ.թ., Հ. Գ. Խաչատրյան

11.02.2020 թ.